ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ՀԱՅՏԱՏՈՒՆԵՐԻՆ

Մրցույթի ծածկագիր ICARE- 020/AM/23

Առաջարկները ներկայացնելիս պետք է հաշվի առնել հետևյալ պայմանները.

1. Ֆինանսավորում

1.1. «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամի (ICARE) կողմից:
1.2. Պահանջվող գեներատորի բնութագիրը ներկայացված է Հավելված 1-ում: Հայտատուն կարող է ներկայացնել պահանջվող տեխնիկայի մի քանի հնարավոր տարբերակներ:

Հավելված 1

Անվանում	***Նկարագիր***
Գեներատոր - 1 հատ	• Տեսակ՝ ձայնամեկուսիչ • Նոմինալ հզորություն՝ 62.5/50 ԿՎԱ/ԿՎՏ • Մաքսիմալ հզորություն՝ 69/55 ԿՎԱ/ԿՎՏ • Լարումը՝ 400/230 Վ • Ֆազերի քանակ՝ 3 • Ելքային հոսանքի հաճախությունը՝ 50 ՀՑ • Բաքի ծավալը՝ 120 Լ • Վառելիքի տեսակը՝ դիզել

2. Սերտիֆիկատներ

2.1. Մատակարարը պետք է ներկայացնի պատշաճ փաստաթղթեր որակի ստանդարտներին համապատասխանության մասին:
2.2. Մատակարարը ինքն է կրում տվյալ փաստաթղթերի ձեռք բերման հետ կապված ծախսերը:

3. Բեռնափոխադրում, ադմինիստրատիվ ծախսեր և այլ հարկեր

3.1. Պահանջվող գեներատորը պետք է առաքել հետևյալ հասցեով՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզ, Պռոշյան համայնք 5-րդ փողոց, 12-րդ նրբանցք, 1-ին շենք:

3.2. Պետք է նշված լինի հստակ ժամկետ պահանջվող գեներատորի առաքման համար վերը նշված հասցեում:

4. Հատուկ պայմաններ

4.1. Վճարման կարգի մասին պայմանագրային պայմանների նախնական մանրամասներ՝

ա/ Պատվիրատուի կողմից կանխավճարի տեսքով վճարում չի կատարվում,

5. Ծրարի ներկայացման պայմաններ

5.1. Հայտը պետք է դրված լինի փակ կնքված ծրարի մեջ, որի վրա պետք է նշված լինի ուղարկողի (մասնակցի) հասցեն և անվանումը, ստացողի «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամի հասցեն և անվանումը, մրցույթի ծածկագիրը, հետևյալ բառերը «Չբացել մինչև 2023թ. Ապրիլի 21-ը ժամը 16:00-ը»:

5.2. Մրցույթի առաջարկները կընդունվեն մինչև 2023թ. Ապրիլի 21-ը ժամը 16:30-ը, հետևյալ հասցեով՝

«Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամ, ՀՀ, Կոտայքի մարզ, Պռոշյան համայնք 5-րդ փողոց, 12-րդ նրբանցք, 1-ին շենք

6. «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամը իրեն իրավունք է վերապահում ընդունելու կամ մերժելու որևէ Հայտ և չեղյալ համարելու մրցութային գործընթացը և մերժելու բոլոր հայտերը ցանկացած ժամանակ նախքան պայմանագրի շնորհումը առանց, հետևաբար, որևէ պարտավորության ենթարկելու տվյալ Հայտատուին կամ Հայտատուներին, կամ առանց պարտավորությունների բացատրություն տալ Հայտատուին կամ Հայտատուներին «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամի գործողությունների հիմքերի վերաբերյալ:

7. Փաստաթղթերի ցանկ

7.1. Մրցութային ծրարը պետք է պարունակի հետևյալ փաստաթղթերը.

1) Ձև 1՝ Մասնակցի հայտ
2) Պետռեգիստրի վկայականի պատճեն
3) Գեներատորի տեխնիկական բնութագիրը կնքված և ստորագրված կազմակերպության կողմից:

8. Գնահատման հիմնական չափանիշներ

8.1. «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամը ներկայացված հայտերը գնահատելու համար սահմանում է ներքո շարադրված հիմնական չափանիշները:

a) Առաջարկվող ապրանքի խելամիտ սահմաններում առաջարկվող գինը և մատակարարման ժամկետը:
b) Հայտատուի տեխնիկական, մարդկային և կառավարման ռեսուրսների առկայությունը մատակարարվող տեխնիկայի երաշխիքային սպասարկման համար:

9.2. Գնահատման նպատակով «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամը կարող է, Հայտատուի համաձայնությամբ, այցելել հայտատուի գրասենյակ, գեներատորի գտնվելու վայրը;

9.3. Հայտում ներկայացված փաթեթում արտացոլված գները կստուգվեն «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամի կողմից: Թվաբանական սխալների առկայության դեպքում «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամը հիմք կընդունի ճշգրտված գինը: Նման սխալների առկայության դեպքում «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամը կարող է հարցման միջոցով լրացուցիչ պարզաբանումներ պահանջել հայտատուից:

9. Կոնտակտային անձ հարցումներին պատասխանելու համար

Հարցերի դեպքում պետք է դիմել «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» հիմնադրամի աշխատակից Կարեն Չախոյանին, +374 77 727 940 հեռախոսահամարներով: